

Սիրելի Հայրենակիցներ,

Ս. Ե. Ն. Ա. Եկեղեցույ Սասուն Պարախումբի վարչութեան անունով սրտագին շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեր քաջալերանքին, որու հետեւանքով մեր պարախումբը իր հինգերորդ ելոյթը պիտի ներկայացնէ 35 երիտասարդ-երիտասարդուհիներու մասնակցութեամբ, 20 Յունիս 2009 «Հայ Երիտասարդական» Կեդրոնի սրահէն ներս, ղեկավարութեամբ պարուսոյց Ճօ եւ Սօսի Աւագեաններու:

Հայրենիքէ հեռու, օտար աստիճաններու վրայ Սասուն Պարախումբը կը յաջողի հայ մշակոյթի ժառանգութիւնը փոխանցել սփիւռքահայութեան պարարուեստի միջոցաւ, հեռացնելով գանձոնք առօրեայ մտահոգութիւններէ, մեր մէջ կը բոցավառէ հայ հոգին ու կ'ամրապնդէ մեր արմատները:

Այսօր մենք կարիքը ունինք Ձեզ պէս առատաձեռն ու քաջալեր հայրենասէրներու որոնց օգնութեամբ կարող է Սասուն Պարախումբը գոյատեւել, 35 000 հաշուող հայ զաղութէն 35 երաշխաւորներու օգնութեամբ կարող ենք մենք մեր երդը շարունակել ու ամրապնդել կապը հայ երիտասարդութեան Եկեղեցույս եւ ազգութեան հետ:

Տարեկան \$ 200 ի նուիրատուութեամբ, երաշխաւորներ կը ստանան իրենց հրաւիրատոմսերը Սասուն Պարախումբի տարեկան ելոյթին, առաւել CD մը եւ ըստ փափաքի կը յիշուի իրենց անունը ելոյթի յայտագրին մէջ, առաւել իրենց կը տրուի նուիրատուութեան ստացագիր:

Ձեր նիւթական երաշխաւորութիւնը բարձր պիտի գնահատուի Սասուն Պարախումբի վարչութեան եւ անդամներուն կողմէ: Տէր Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեանի տեսիլքով ծնունդ առած այս պարախումբը վարչութեան ջանքերով պիտի շարունակէ իր աշխատանքը հրամցնելով հայ պարը սփիւռքահայութեան, որոնք իրենց անցեալը յիշելով, ապագայ սերունդը տեսնելով պիտի խանդավառուին:

Խորին շնորհակալութիւն բոլոր երաշխաւորներուն, Ձեզ պէս հայրենասէրներու լուսնները միշտ անսպառ: Աստուծոյ եւ հայրենիքի սիրոյն ամէն մի նուիրատուութիւն կը փոխարինուի Աստուծոյ օրհնութեամբ:

**Սասուն Պարախումբի Ատենապետուհի
Սիւ Ապաճեան**